



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ամբ բանակար ծովառական
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՏԱԿԱՐԱՆ

Մ. ՊԱՇԱՐԵԱՆՑ

18 մայ 1906 թ Հայելիքի

ԱՅՆՏԵՂ Ի ԱՅՆՏԵՂ Ի

891.99

2-15

մար

1001
1006



«Ակտոս թեզ Հայոց խղձիկ ժողովուրդ,
Ցիրուցան ելար անմեղ, անխորհուրդ»:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏ



Ա.-ՊԵՏԵՐԲՈՒՐԴ
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1903

18.06.2013

405



ԱՅՆՏԵՂ ԷԼ ԱՅՆՏԵՂ ԷԼ

(Մի պատկեր հայ գաղթականների կեանքից)

ԻԲՐԵՒ ԱՐՁԱՆ

Այս երկրորդ աշխատասիրութիւնս նուիրում եմ քո
թանգարին յիշատակին, մայրիկ ջան, այն բացառիկ ա-
ռաւելութեան համար, որը յատուկ է ոչ սովորական
մայրերին:

Դեռ 16 տարեկան հասակում, հնազանդվելով ծնող-
ներիդ կամքին, բաղդդ կապել էիր մի 40 տարեկան տա-
րէց մարդու հետ: Սակայն անողորմ ճակատագիրը այդ
բաւական չչամարելով՝ աւելացրել էր մի այլ աւելի խիստ
հարված—հօրս խելաքարութիւնը և որից յետոյ նրա
մահը... և դու, 31 տարեկան հասակում այրի մնալով, ճշն-
շեցիր քո մէջ ամուսնական ցանկութիւնը աշխատութեան
անընդունակ հինգ որբերիդ սիրուն, որոնց առողջ մար-
մնով, բարոյական ուղղութեամբ հասցբեցիր արբուն հա-
սակի. իսկ դու՝ այդ բոլորի փոխարէն՝ տուժեցիր կորց-
նելով առողջութիւնդ դեռ երիտասարդ հասակում և վերջը
այդ միւսնյն ցաւին էլ զո՞հ դնացիր:

Դու, մայրիկ ջան, մասնաւորապէս իմ կեանքի նե-
ցուկը եղար, իմ, որ երբէք հայրական ինսամք չեմ վայե-
լել և բարոյապէս և մասնաւորապէս և' ֆիզիքապէս: Իսկ
այժմ, երբ գիտակցութեան եմ հասել, որ պէտք է ապրէի
առանց այդ նեցուկին, բայց արդէն ինձ համար անհրա-
ժեշտ պահանջ էր դարձել քո հովանաւորութիւնը: Աչա-

Дозволено цензурою. С.-Петербургъ, 4 Сентября 1903 года.

„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ 4.

թէ ինչու քո մահը իմ կեանքս իր ամբողջ էռւթեամբ
ցնցեց... և այդ սոսկալի կորստից յետոյ միայն զգացի,
թէ որքան երախտապարտ մնացի քեզ, բայց աւաշը դու
այլ ևս չկամ... և ես այժմ այդ ծանր ցաւի տակ ճընշ-
ված՝ ոչ մի կերպ չեմ կարողանում երախտահատուց լի-
նել քեզ բացի այս քանի տող գրութիւնից, որը նուիրեցի
քո յիշատակին.

Կրտսեր որդիկ

1902 թւի յունիսի 5.

Լաղզվանում

ԱՅՆՏԵՂ ԷԼ ԱՅՍՏԵՂ ԷԼ



շուն էր. գիւղացոց դաշտային գոր-
ծերը վերջացել էին. հասել էին
նրանց համար հանգստութեան, ու-
րախութեան օրերը։ Սակայն այդ
տարում ուրախութեան ոչ մի ձայն
չէր լսվում Բ. գաւառում, որտեղ
է գտնվում պատմութեանս նիւթ տվող Ա. գիւղը։
Գիւղ մտնելուն պէս ամենքի դէմքին նկատվում
էր՝ սովորական պարզ ժպիտի փոխարէն՝ մի դառն
թախծութիւն։

Այն օրը, որ սկսվում է իմ այս պատմու-
թիմը, ցուրտ էր. թէև միայն շրջապատ սարերն
էին ձիւնով պատած, բայց կատաղի քամին ձիւնի
փոշին մաղելով գիւղի վերայ թանձրացնում էր
այնտեղի եղամը։ Հինց այն փոթորկալի ժամում
գիւղի մի խարխուլ խըճիթից դուրս եկան երկու
8-10 տարեկան երեխաներ վայտէ կուժեղը ու-

սերին դրած, որոնք գնում էին մօտակայ ժայռի
տակից հոսող աղբիւրից ջուր տանելու:

—Որ ջուր տանենք, մամչն մզի խաց կի-
տայ, Պետիկ—հարցըց փոքր եղբայրը մեծին
դեռ տեղ չհասած:

—Բա՛, եղօ ջան. լուսուն ափօն գարի տա-
րաւ ջաղաց աղալու, ալուր կը բերայ, մամչն
խաց կը թխայ, մենք լէ կուշտ կուտենք—պա-
տասխանեց մեծ եղբայրը:

—Իմ «ինձոր» *) եղ լէ կը բերեն ուրանց
խետ—նորից հարց տվեց փոքրիկ եղօն ուրա-
խացած եղբօր խօսքերից:

—Խա-բա՛, եղօ ջան, ափօն ըստ, որ կը
բերայ—պատասխանեց Պետիկն ու երկուսն էլ
ցրտից ճնշված՝ լոեցին. Բայց երկար չտեսեց այդ

*) 1877 թւի սուստածկական պատերազմի ժամա-
նակ, երբ վերոյիշեալ երեխաների հայրը-Մատո-ամին «Կա-
ւարոյին»ում եղած թրբական զօրքին սայլով ալիւր տա-
րաւ (ուլամ), զինորները նրա չորս եղն էլ մորթեցին
կերան, սայլն էլ վառեցին. Թշվառ գիւղացին, խանութը
հրդեհված վաճառականի պէս, ձեռքերը ծոցին տուն վե-
րադարձաւ, և այն օրից սյլ ևս չկարողացաւ ինքն իրեն
ուղղել սովու էլ միւս կողմից վրա հասաւ. Աչա այն օրից
փոքրիկ Եղօն զրկվեց իր «ինձոր» անունով եղից, որի
համար նրա հայրը միշտ յոյս էր տալիս, թէ մի օր կը
բերէ, ինչպէս և այս անդամ ջաղաց դնալիս:

լուսիւնը. փոքրիկ եղօն բորիկ ոտքերը սկսեց
վեր ու վար անելով լաց լինել: Թէկ մեծ եղբօր-
Պետիկի համբերութիւնն էլ հատել էր, բայց մի
կերպ զսպում էր եղբօրը խրախուսելու համար:
Ցրտից կապուտկած, արտսունքն աշերին տուն
վերադարձան փոքրիկները, որոնց մայրը գորո-
վալի փայփայանքներով սկսեց տաքացնել «քուր-
սու» տակը. բայց այդ տաքացնելուց ևս առա-
ւել սաստկացաւ նրանց ոտքերի ու ձեռքերի
կսկզբանը, ուստի երկուսն էլ սկսեցին լաց լի-
նել: Այդ սրտաշարժ տեսարանի դէմ մայրական
սիրտն էլ չկարողացաւ դիմանալ և սկսեց արտ-
սունք թափել ու բողոքել:

—Ո՞վ, մարդասէր Աստված, չէ որ գու ըմէն
բան կը տեսնիս,—չէ որ խեղճ ու սէֆիլներին
կօգնիս... հապա չուր երբ ըմալ խեղճ ու տկօզ,
անօթի-անտէր, թուրք ու քրդու ձեռին գերի
թողուս մզիկ... թէ չես լսիր մեղաւորիս ձէն,
լսիր զիմ խեղճ ճժերու ձէն, ուրանց էս օրին
խասցնողին դատ ու դատաստան արա...

Հէնց ալդ իսկ միջոցում փոքրիկների հայրը,
Մատո-ամին ներս մտաւ իր 20 տարեկան Յով-
հաննէս որդու հետ. նրանք, առանց այն տխուր
տեսարանին էլ, վշտացած էին, որովհետև ճա-
տեսարանին էլ, վշտացած էին, որովհետև ճա-

նապարհում շարունակ իրանց ընտանեկան նեղ փիճակի վերայ էին մտածում ու խորհրդակցում:

Բ

Հմրան ուժասպառ արեգակը մտաւ հարաւարևմտեան բլուրների տակ, սառը քամին սկսեց աւելի ուժգին փշել, գուշակել տալով՝ թէ ձմեռը դեռ շատ սառնամանիքներ պէտք է թափէ երկրի վերայ: Ա. գիւղում խորին լոռութիւն էր տիրում: Գիւղացիք մտել էին գոմերի տաք օտաները և շարունակ տիրող սովի մասին էին խօսում-տրտնջում: Խակ Մատօ-ամին այդ երեկոյ օտայ չէր զնացել, այլ մնացել էր տանը իրանց փիճակի մասին խորհրդակցելու համար: Մատօ-ամինի տունը այդ երեկոյեան սովորականից աւելի տիսուր տպաւորութիւն էր թողնում, որովհետև տան լոռութիւնը խանգարող և նրա բնակիչներին միսիթարող փոքրիկներից մէկը-Եղօն արդէն գերեզման էր մտել, իսկ Պետիկն էլ տառապում էր ցաւի ճանկերում: Առ հասարակ վարակիչ հիւանդութիւնները սովի հետ միացած են դործում, ինչպէս էր և այս անգամ Բ. գաւառում:

—Մութն է, աղջի, վեր ել կրակ վառի—ասաց Մատօ-ամին իր կնոջը. վերջինս իսկոյն վեր

ելաւ տեղից, կայծաքարով վառեց ծծմբապատ պատրոյկը, որից էլ կպցընց «մարխն» *) ու գրեց երեք ոտանի փայտէ աշտանակի վերայ: Մարխը հազիւ հազ իր փայլը տարածեց քուլսու շուրջը, աւելի մոայլ մտքեր առաջացնելով ներկայ եղողների մէջ:

—Ուրիշ ճար չ'կայ, ափօ, թորկէք էրթամ քաղաք, լնտեղ մէկի կուշտ զուլուս կանիմ, ինքս կը ժղվիմ, հախս լէ կը խրկեմ ձեզ—խօսեց Յովհաննէսը նորոգելով այդ մասին եղած խօսակցութիւնը:

—Թո՛րկ, լաւօ, իդա քո միտք, թող ի սէր Քըիխստոսի... Եղօյի ցաւ բօլա մեզիկ... մըր մխիթարութուն դու մացիր...

Մատօ-ամին խօսքը կիսատ թողնելով՝ նայեց հիւանդին, որը՝ ճնճաժամի մէջ՝ տանչվում էր և էլ չ'կարողացաւ ինքն իրեն զսպել ու արտասվեց: Թէև նա մի տոկուն, դժբաղդութիւնների դէմ միշտ կուող մարդ էր, բայց, որպէս մարդ, զգայուն էր, չէր կարող անտարբեր ձեանալ, երբ

*) Մարխը դուրս է գալիս մայրի ծառի արմատից և պատած է լինում գիւրավառ խէժով, որը, յիշեալ պատերազմից առաջ աղբատները գործ էին ածում իրբելու ասւորութիւն ձէթի, կամ այժմեան նաւթի փոխարէն.

մէկից զըկվում էր իր շորս սիրասուն զաւակներից: Մեծ որդին, որ մի քանի տարի առաջ գնացել էր օտար երկիր, կորած էր համարում, Յովհաննէսի գնալը նոյնքան կորստարեր էր նրա համար, իսկ մսացածներից մէկը՝ արդէն գերեզման էր իջել, միւսն էլ հեռու չէր գերեզմանից:

Մատո-ամին երբ լրեց, բոլորն էլ լուցին, և այն ճնշող լոռութեան մէջ լսվում էին զսպված հեկեկանքներ, որոնք դուրս էին թափվում մայրական տոշորված կրծքից և սիրազուրկ կնոջ գեղուն սրտից: Վերջինս Մատո-ամինի մեծ որդու ամուսինն էր, որը միայն հինգ ամիս էր կենակցել իր սիրեցեալի հետ....: Այժմ նմանօրինակ դէպքը նորոգեց, քըքրեց ու արիւնլվայ դառուց նրա սրտի վէրքերը:

2Է, ափօ ջան, չէ, ես չըմ կրնայ մնալ յուտատեղ, կերթամ... թէ որ չժորկես, կը փախչիմ, վալլա կը փախչիմ... ես էլ չըմ կրնայ քաշել էս դարդ ու ցաւեր...

—Եաման լաւօ, քո Աստծու խաթըր, մը լնիր իդա բան, վազն արի իդա սաւդից... եաման քո բաղդն եմ ընկել, Լաւօ, մը էրթայ քո ախալօր ճամբախ... թորկ մզիկ խանգիստ գերեզման մտնինք, բուռ մի հող թալէ մըր էրսին...

Դժբաղդ մայրը, խօսքը կիսատ թողնելով, այնպէս պինդ դրկեց Յովհաննէսին, որ կարծես հէնց այն ըոպէին խլում էին նրան իր գրկից և սկսեց դառնագին կերպով ողբալ: Մինչև կէս գիշեր այդ միննոյն տխուր տեսարանը շարունակվեց Մատո-ամինի տան մէջ, բայց և այնպէս դրական ոչ մի վճիռ չ'կայացաւ Յովհաննէսի գնալու մասին:

Գ

Գարունը՝ նոր-նոր բացված՝ իր գեղեցիկ ողջոյններով գիրկն էր հրաւիրում մարգկանց, բայց ոչ ոք չէր զգում և չէր հրապուրվում նրա սըրտագրաւ տեսարաններով: Ընդհանրապէս Բ. գաւառում, մասնաւորապէս Ա. գիւղում՝ սովից ու համաճարակ հիւանդութիւնից առաջացած վիշտը արճիճի նման չոքել էր ամենքի սրտի վերայ և, որքան ուժ ունէր, սեղմում էր: Յովհաննէսը՝ մի կերպ քաշ տալով՝ ամբողջ ձմեռն անցուց դիւղում, իսկ գարուն գալուն պէս՝ մի գեղեցիկ օր բաժանվում էր հայրենիքից և զնում օտար երկիր բաղդ որոնելու—բաղդ, որի դժոխային սև պատկերը միշտ ծածկված է մնում յուսոյ փայլուն շողերով: Նա ամենից առաջ, երբ նոր էր

բացվում արշալոյսը, երբ քնած բնութիւնը յանկարծ սթափված՝ իր ճիշ ու ճռողներով ողջունում էր երկրին, գնաց գերեզմանոց, որտեղ աճող միակ ուռենու գերայ հաւաքված սարեակները գարնան գալուստն էին երգում այն լուսթեան մէջ՝ դարդ ու ցաւերից մարած, իղձը ու փափագներով լի՝ հանգչած սրտերուն... Երանի էր, որ չէին լսում նրանք բնութեան երգը, որը մարդկանց սիրտը լցնում է աշխարհը սիրելու քաղցը զգացմունքներով և, առանց յագուրդ տալուն բանց հոգուն՝ մահվան մըմունչների փոխվելով կամմացկամաց լոռում է ու մարող սրտերի մէջ թողնում իր գերջին դառն հառաշանքը: Միթէ այն հառաշանքը չէր, որ լսում էր Յովհաննէսը երկու թարմ բլրակների տակից, որոնց մօտ նա չոքած՝ ողողում էր իր արտսունքներով:

—Կացէք բարով, եղօ ջան, Պետիկ ջան, իմ գառնուկ աղպէրներ... ախ, թրդ իմ լուս քօռնար, շտեսնէի ձեզ էն սե՞ օրերին... դուք խեղճ ու տկլօգ մացիք, դուք անօթի-անճար մացիք... նաշարութիւն ձեր կեանք մաշցց-կերաւ... Միշ ձեզ գերեզմանի մէջ թորկած՝ խարիպ երկիր կերթամ... կացէք բարով... երբ բարով-խէր յետ դառնամ, ամեն օր կիդամ ձեր գերեզման կը

խամբուրիմ, խունկ կը ծխիմ, աղօթք կէնիմ, որ Աստված էլ չը չարշարէ ձեզ էն աշխարհում...

Յովհաննէսը իր վշտահար սրտից դեռ թափում էր դառն բողոքները, երբ նրա ընկերները եկան ու տարան գերեզմանոցից: Նա տուն վերադառնալով ամենքի հետ համբուրվեց, «կացէք բարով» ասաց ու մի քանի ընկերներով ճանապարհ ընկաւ:

—Հա-հու ու... խարիպութուն, խարիպութուն... ասիլն իմալ խօլայ է... քանի-քանի քամբաղութիւնների դուռ կը բացես, քանի-քանի ջահիլ-ջիւանների ումըռ կը մաշես, մուրազներ մէջ սրտերուն կը թորկես, քանի-քանի մէրիկներու սիրտ կը տրօրես, կը միսկըտացնես, քանի-քանի սիրելիների աչք ճամպախ ըշկելով կը թորկես, սրտեր կը ճմուես, արիւն կը քամես:

Այդ ցաւատանց բողոքողը մի տարէց կին էր, որը լսելով Յովհաննէսի մօր լաց ու կոծը, ինքն էլ ձայնակից եղաւ նրան. որովհետև ինքն էլ էր խմել «խարիպութան» դառն բաժակից: Նա դեռ «ջահիլ» աղջիկ էր, երբ նշանաղրվեց իր սիրած երիտասարդի հետ, բայց վերջինս հանգամանքներից ստիպված՝ գնաց օտար երկիր... էլ յետ չեկաւ... Անցան շատ տարիներ, բայց սիրող սըը-

տում շհանգան սիրոյ կայծերը։ Ջատ անգամ նա առանձնանում էր «Կոնդ» անունով բլրակի վերայ, խորին անձկանօք նայում էր պանդուխտի ճանապարհներին և արտասուք թափում։ Այդպէս շատ տարիներ նա իր կորցրած սէրն էր լալիս, բայց աւաղ, ցամաքեցան արտասուքի աղբիւրները, մաշվեցան սիրող սրտի լարերը, կեանքի գարունն անցաւ... սակայն ոչ սէրը իսպառ հանգաւ և ոչ էլ նա երևացաւ։

Մի այլ դրան մօտ մի այլ պառաւ էր լալիս։ Նա էլ իր սիրելի որդուն յիշեց, որը նոյնպէս գերեզման էր իջել օտար երկրում։ Եւ այդպէս շատ ողբը ու հառաշանքներ ձայնակից եղան Յովհաննէսի մօր ողբին։

Դ

Բաղդը օտարութեան մէջ էլ չէր հաշտվել Յովհաննէսի հետ։ Նա երկար դէս ու դէն թափառելուց վերջը մի անխիղճ աստիճանաւորի ձեռք էր ընկել, որից ոչ մի կերպ չէր կարողանում ազատվել։ «Խաղէյինը» նկատելով Յովհաննէսի հաւատարմութիւնն ու քաղցրահամբոյր բնաւորութիւնը՝ նիւթական հաշւով նրան կապել էր իր տան հետ-ամբողջ մի տարվայ վարձը իրըն

գրաւ վերցնելով։ Այս երրորդ տարում Յովհաննէսը շատ խնդրեց, աղաչեց իր խաղէյինին, որ իրեն հասանելիք գումարը ամբողջապէս վճարէ, բայց իզնւուր... իսկ առանց այն գումարին նա չէր կարող վերադառնալ հայրենիք, որովհետեւ ամեն անդամ՝ հօրը նամակ գրելիս՝ յուսադրում էր միենոյն գումարով։ Խաղէյինի այս վերջին մերժումը Յովհաննէսի վերայ շատ խիստ աղդեց և վերջը շատ տխուր հետեանք ունեցաւ։

Յովհաննէսի խաղէյին՝ Գասպար Մոլիգեանը մի 50 տարեկան մուգ կարմրագոյն դէմքով՝ ըստ երեսյթին առողջ մարդ էր, որ կարծես միշտ ասում լինէր. «Չեռքս անցածը՝ կու կը տամ»։ Նրա մազերը ժամանակից շատ վաղ արդէն սպիտակել ու թափվել էին... այնուամենայնիւ նա դեռ չէր յետ կեցել զեխ ու անառակ կեանք վարելուց։ Նա «ազնիւ, բարոյական» և այլ այդ տեսակ խօսքերին նշանակութիւն տվողների վերայ ծաղրում էր, և ուրիշին խարեւը մի առանձին ընդունակութիւն էր համարում, առարկելով թէ. «Այդ ընդունակութիւնից զուրկ մարդիկ անասուններ են, որոնք առանց ուրիշի օգնութեան չեն կարող լաւ ապրել, իսկ բարոք կեանք վարելու համար ամեն տեսակ միջոցներ ձեռք առ-

նելը ներելի պէտք է համարեր։ Կեանքում այդ ուղղութեամբ առաջնորդվելով հանդերձ՝ խոհեմութեամբ թագցնում էր իր համոզմունքները ամբոխից և որի թոյլ կողմերը միշտ շոյելով՝ պաշտպան էր հանդիսանում նրա ցաւերին։ Իսկ ամբոխը հաւատում էր Մոլիգեանին ու յարգում...

Մոլիգեանը իր մատաղահաս կնոջն էլ ձեռք էր բերել ցած միջոցներով։ Նա սիրահարված ձեանալով՝ վերջիվերջոյ աշողեցրել էր թակարդի մէջ գցել 17 տարեկան մատաղ կոյսին, զոհ բերելով իր ստոր կըքերին։

Տիկին Միրանոյշն էլ այնքան էր ատում իր ամուսին՝ Մոլիգեանին, որքան՝ թակարդ ընկած որսը իրեն որսողին. սակայն ինչ կարող էր անել, երբ ամուսնութեան օրէնքն էլ այնքան խիստ է սահմանված ամուսնացողների համար, որքան թակարդ՝ աղուէսների ու աղաւնիների համար։ Մատաղ տիկնոջ սիրտը թրթում էր սիրելու և սիրվելու համար, բայց իր՝ աւերակ դարձած ամուսնու սրտում սիրոյ մի նշոյլ չկար. իսկ սիրով լի սիրտը չէր կարող առանց սիրելու մնալ, ինչպէս չի կարող նոր բացված ծաղիկը չբուրել, ուստի նրա սիրագեղ սրտում կամաց-կամաց զարթում էին սիրոյ զգացմունքներ մէկին բոյր տա-

լու համար, որոնց դէմ նա կռւում էր ու տանչվում լուռ ու անմէկին։

—Իմ ամուսինը հարուստ է. ինձ շրջապատել է ճոխ զարդարանքներով... բայց ինչ օգուտ, որ ես դժբաղդ եմ, որովհետև մեր ամուսնութեան մէջ հաւատարմութիւն, սէր չկայ... ես ցանկանում եմ սիրել, սիրել հոգուս ամբողջ զօրութեամբ, բայց ոչ ոքի իրաւունք չունեմ սիրելու բացի ամուսնուցս, թէկուզ մի հրէշ լինի նա... Պէտք է լուռ ու մունջ տանեմ ինձ վիճակված սև ճակատագիրը—այդպէս է դատաստան անում ինձ շրջապատող հասարակութիւնը։ Իսկ իմ ամուսինը... Նա ազատ է այդ տեսակ դատավճիռներից... Ահա թէ ինչու նա գիշեր-ցերեկ քաշէ զալիս անառակ կանանց յետեից և գեռ յարգանք է վայելում միենոյն հասարակութիւնից...։ Օ՛, այսուհետեւ ես էլ ոչ մի, նոյն իսկ փողոց ընկած, անառակ կնոջ չեմ պարսաւելու, որովհետև այժմ ինձ համար սա մի անհերքելի ճշմարտութիւն է, որ կանանց անկումն էլ կանգնումն էլ տղամարդկանց ձեռքով է լինում...։

—Յովհաննէսը մի աղնիւ ու գեղեցիկ երիտասարդ է. ինչ անենք որ նա ազգբարեւ բաղդը նրան էլ այդ է վիճակել... Այս, անիծված բաղդ,

1001
1996



ինչ սոսկալի խաղեր ես խաղում մարդկանց գըլ-խին...

Եւ նա յիշելով իրեն դժբաղդացնող դէպքը՝ բացականչեց.

— Օ՛, չարագուշակ օր, անխիղճ ամուսին, գաղան մարդ, զռւ, և միայն զռւ խեցիր ինձանից ամբողջ կեանքիս երշանկութիւնը... ծաղիկ կեանքիս ծաղիկ օրերը լաց ու հառաչանքի փոխելով:

Այդ բողոքից վերջը, որ համարեա ամեն օր կրկնվում էր, տիկինը ընկաւ մահճակալի վերայ թուլացած ու ընկճված և հեկեկալով արտասանեց.

— Ես կին եմ, ես անգօր եմ, չեմ կարող տանել... Դու օգնիր ինձ, ով Աստվածամայր կոյս:

b

Հայրենիքի, ծնող-ազգականների, նամանաւանդ սիրոյ կարօտը վերջիվերջոյ Յովհաննէսին զցեց անկողին. սիրոյ, որ ամբողջ չորս տարի շարժում էր նրա սրտի լարերը, տանչում էր նրան, որի մասին ոչ ոք բան չ'զիտէր, ոչ ոք, բացի իր պաշտելիից, որի հետ բաժանվելու օրը միայն բացվեցան, միմեանց սիրոյ զգացմունքներ փոխարինեցին և մաքուր, կուսական մի համբուրով ուխտ հաստատեցին այնտեղ—զիւղից

դուրս աղբիւրի եղերքում աճող միակ ուռենու տակ ու բաժանվեցին՝ կրկին մի օր միանալու յուսով...

Յովհաննէսը այն աստիճան ընկճվել էր իրեն տանչող ցաւերից, որ երբ իր ծառայութեան չորսորդ տարին լրացաւ՝ վերջնական կերպով խընդրեց իր խաղէյինից, որ իրեն հասանելիք ամբողջ գումարը վճարէ, սակայն երբ վերջինս խսպառուրացաւ նրա առաջին տարվայ վարձը, որ վերցը ել էր իբրև գըաւ, Յովհաննէսը այլ ես չկարողացաւ տանել այդ իրեն համար ծանը հարվածը և անկողին մտաւ:

Զ

Յովհաննէսի կեանքի վերջին օրն էր—կիւրակի էր և շատ գեղեցիկ օր։ Առաւօտեան լոյսը գեռ շբացված՝ անձրեւ ցօղել էր երկիրն ու դադարել։ Յօղաշաղաղ ծառ ու ծաղկունքից գոլորշին վեր բարձրանալով՝ օղը լցվում էր թարմ անուշահոտութեամբ և կեանք ու սէր սփոռում շորս զին։ Կարծես այդ օրը երկինք ու երկիր զուարթացած՝ համերաշխ սիրով միացած մի հանգէս էին կատարում մարդկանց զուարճացնելու համար։ Բաղդաւոր մարդիկ դուրս էին եկել ընու-

թեան գիրկը նրա բարիքները վայելելու։ Հարս
ու աղջկներ խմբեր կազմած՝ զուարթ դէմքերով,
անոյշ խօսքերով գնում էին դէպի այգիները զրօ-
նելու։ Իսկ սիրոյ զոյգերը, այգիներում ծառերի
խտութեան մէջ առանձնացած, այն երկրային
դրախտում միմնանց սրտերի սիրոյ լարերը շար-
ժում, խօսեցնում և՛ բերկըութեան և՛ թախծու-
թեան արտսունք Ծափել տալիս... և ուր և գե-
տի և ծառերի վերայ զուրգուրացող զեփիւռի մըր-
մունչները՝ միացած թոշունների դայլայլիկների
հետ, զցում էին այն երջանիկ զոյգերին ոգե-
զմայլութեան մէջ, վերացնելով մի այլ աւելի եր-
ջանիկ աշխարհ, որտեղ ոչ մի բոնութիւն, ոչ մի
լաց ու հառաջանք չկայ, այլ միմիայն սէրն է
թագաւորում, որտեղ ապրում են միայն սիրող
սրտերը։ Այդ աշխարհը, մարդկանց վառ յօյսերի
այն միակ նշաւակն է, որին ամեն մարդ՝ դեռ
չհասած՝ իր աշքերը սեեռում է նրան ու սրտա-
տրովի վազում... և երբ անցնում նրանից, յու-
սահատութեամբ վիզը յետ ծռելով նայում է նրան
խորին կարօտով և հառաջում, հաստատ հաւա-
տացած լինելով՝ որ էլ երբէք չի հանդիպելու
նրան. և այնուհետև ապրում, միսիթարվում է
միայն նրա քաղցը յիշատակներով։

Յովհաննէսի մահճակալը դրված էր լուսա-
մուտի հանդէպ, որտեղից երևում էին հեռու տա-
րածված այգիները և զրօսանքի գնացող խըմ-
բերը, բայց նա թմրած դրութեան մէջ լինելով
ոչինչ չէր գիտակցում, մինչև որ քամին՝ բաց
լուսամուտից՝ խփեց նրա երեսին և զգաստացուց
ցաւի տառապանքներից, երբ նրա յիշողութեան
մէջ կենդանացան իր «վաթանի» քաղցը յիշա-
տակները և նա սկսեց ինքն իրեն մըմնջալ.

—Օ՛ ֆը՛, անուշիկ հովեր... աջապ դուք ան-
ցէր էք մըր չայիրներու վրայով... կասես մըր
«ծաղկոտ» չայրի խորոտ ծաղկանց հոտը լինէր...
ախ, աջապ դուք հանդիպէր էք մըր գեղին...
անցէր էք պաղ աղբըներու վրա էն, դուն դու
նացէր էք (մըմնջալ) ուրանց ափի ծաղկիկներու
խետ, խմէր էք էն անուշ-անուշ ջըերէն... ախ,
պաղուկ ջըեր... վառա, ջնկր...

Վերջին բառը այնպէս ուժգին արտասանեց
հիւանդը, որ իր ձայնը հասաւ մինչև միւս սե-
նեակը, տիկնոց ականջին։ Տիկնոց տված սառը
չուրը նորից զգաստացուց հիւանդին և նա նո-
րից սկսեց խօսել իր քաղցը անցեալից։

— Հա-հու, անցած, զացած օրեր... իմադ
շուտ անցաք... երբ իմ ափօն «ծաղկոտ» չայր

կը քաղէր, ես ու նարդիզ լէ կը խաղայինք,
թաւալ-թաւալ կուգէինք վըը խոտերուն... մկան...
Այս, դո՞ր էք անցած օրեր, դո՞ր ես նարդիզ ջան...

Այդ միջոցում, հիւանդը ձեռքերը վերմակի
տակիդ դուրս հանելով, առաջ մեկնեց. կարծես
ուզում էր մէկին գըկել, բայց մի ըոպէից վերջը
թուլացած ձեռքերը նորից ցած ընկան վերմակի
վերայ: Տիկին Սիրանոյշը, որ ներկայ էր այդ
սըտաշարժ տեսարանին, մի առանձին հոգատա-
րութեամբ ձեռքերը դրեց վերմակի տակ, երբ
հիւանդը աշքերը բաց անելով տեսաւ նրան և,
անզգայաբար բացականչեց.

—Մամէ, մամէ ջան... ապա դո՞ր է ափօն,
յորի չեկաւ... Արի, մամէ ջան, արի ձեռքդի դիր
ճակատիս... դիր, որ խովանա... վառա, դիր...

Հիւանդը նորից անզգայացաւ ու լռեց, մին-
չև որ տիկնոց տված սառը ջուրը կըկին զգաս-
տացուց և նա նորից սկսեց զառանցել.

—Դո՞ր է, մամէ ջան, դո՞ր է ափօն, յորի
խետդի չ'բերիր... ախ, ես շատ եմ կարօտցեր
ուրան... Ափօ ջան, արի, արի իմ վաստակած
փարէք տար եղօյիս, Պետիկիս խաց առ, շոր
առ... տես, տես, տկլօզ են, քաղցած են... խաց
կուզեն... խաց տվէք, խաց ուրանց, քաղցած

են... խաց տվէք, անզութ մարդիկ, անաստված
մարդիկ... Ախը՝ խը՝ խը...

Վերջին խեղդված հառաչանքից յետոյ այլ
և չխօսեց հիւանդը... իսկ տիկին Սիրանոյշը,
մարդկանց անարդար վարմունքից և երկնքի ան-
կըշիու դատաստանից վիրաւորված՝ առանձնա-
ցաւ պարտիզի խորքում իր արտսունքները ազատ
թափելու համար, որտեղ, դեռ չբացված վարդի
սիրով տոչորող սոխակի լալահառաշ ձայնը ևս
առաւել գրգուեց նրա սրտի քնքոյշ լարերը, հին
ու նոր ցաւերը քըքրեց, արիւն արտսունքների
ծով դառուց սիրտը: Թափւող արտսունքները մի
քից զովութիւն տվեցին նրա վշտահար սրտին
և նա սկսեց մի մխիթարութիւն որոնել... Բայց
ոչ մի մխիթարիշ բան չ'գտնելով ներկայ կեան-
քում՝ յետ նայեց իր անցեալին... և աշքերը սեհ-
ուեց իր գարնան կեանքի արշալոյսին, որը շատ
կարճ միջոց փայլեց ու ընդմիշտ մթնեց...

—Օ՝ զեղեցիկ բնութիւն, որքան բարի ևս
դու և որքան չար՝ մարդիկ. դու ամեն բանում,
ինչպէս նաև մարդկանց կեանքում, ամեն ինչ
ծլեցնում, ծաղկեցնում ես, իսկ մարդիկ, ան-
խեղճ մարդիկ, քաղում, պորճկտում են այն ծա-
ղիկները, և կեանքը միանգամայն ամայի դարձ-

նում, որտեղ այլևս ոչ մի ծաղիկ չէ բռւնում...

Եւ մի ծանր հառաջանքից յետոյ տիկինը գեր ելաւ տեղից ու գնաց տուն։

Դուք տեսել էք արշալոյսի այն հրաշափառ ծագումը, երբ բնութիւնը իր խորհրդաւոր երեւոյթներով մարդկանց մի անբացատրելի հոգեգմայլութեան մէջ է զցում, երբ թոշուններն անդամ լրած, պըլշած աշերը յառում են հեռու արևելքին և երբ ծառ ու թուփ, խոտ ու ծաղիկ կարծես ունկնդիր կերպով թերփում են դէպի այն կողմը... Յանկարծ չորս կողմից սկսվում է տաղերգութիւնը—ճիշ ու սուլոց, ճիւ ու ճռող, ժպիտ ու քըքիշ—և կեանքը շարժվում ու եռ է գալիս։ Այդ արշալոյսի առաջին ողջոյնն է, որ տալիս է բանաւոր մարդկանց։

Հէնց այդ ժամանակ, կեանքի վառ արշալոյսին, երբ Յովհաննէսը աշքերը յառած՝ սպասում էր նրա կենսատու ողջունին, աւաղ, յաւիտեան զըկվեց նրա լոյս-արևից և դառնացած սրտով մտաւ սև հողի գիրկը, այդ յաւիտեան կան լուռ բնակարանը։

ԵԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Ա.



յն օրից շատ տարիներ էին անցել, երբ Մատո-ամին իր Յովհաննէս որդուն ճանապարհ զցեց դէպի օտար եկիր։ Այժմ նա, ընդհանուր կոտորածին զոհ տալսվ իր աւագ որդուն, որ նոր էր վերադարձել պանդխտութիւնից, կամայ-ակամայ հաշտվել էր թողնել արնաշաղախ հայրենիքը, գնալ մի խաղաղ երկիր, ուր որ գնացել էր իր Յովհաննէս որդին, որի մասին վաղուց է՝ որ մի տեղեկութիւն չէր ստանում։ Նա պատրաստվելու բան չունէր. ամեն ինչ աւարի բաժին էր գառել, միայն սպասում էին մի յարմար ժամի, որ ճանապարհ ընկնէին։ Վերջապէս հասաւ այդ յարմար ժամը—մի մութ, ամպամած գիշեր, երբ Մատո-ամին իր կնոյչ, այրիացած հարսի, վերջինիս չորս

տարեկան որդու հետ ճանապարհ ելան։ Նըանք գնում էին ոտքով, այն ևս ճանապարհից դուրս, նրա համար որ սահմանապահ զինուորների ձեռքը շրնկնէին։

Ամպերը դղբացին, սկսվեց յորդ անձըև գալ, բայց մեր գաղթականները աւելի արագ, “աւելի սրտապնդված էին առաջ գնում, համոզված լինելով՝ որ այդ տեսակ եղանակում թուրք զինուորները երբէք դուրս չեն գալ իրանց որչերից, և չին զգում ոչ մի դժվարութիւն, չնայելով որ շարունակ ոտքերը քարերին էին խփում ու վիշտաւորում. այդ բոլոր դժվարութիւնները ոչնչանում էին անցեալի դառն յիշողութեան և ապագայ փայլուն յոյսերի մէջ։ Առանց մի ըոսէ կանգ առնելու լուռ ու մունչ առաջ էին գնում նըանք, միայն փոքրիկ Մինամն էր երեսմ-երեսն լաց լինում, որին լուեցնում էին թուրք «զափթիանների» անունով։ Երեխան այդ սոսկալի անունը լսելուն պէս լուսում էր և, մի քանի ըոսէից վերջը, նորից սկսում երկիւզով մըմոալ։

Անձեւը դադարեց, լուսը բացվեց, արեւ ծագեց, երբ մեր գաղթականներն էլ, անցնելով սահմանը, այդ նոր երկրի վերայ մի աղբիւրի եղեր-քում հանգիստ առան, ազատ շունչ քաշեցին և,

հանելով իրանց պարկից չոր հացը, թրչեցին աղբիւրի ջրում, սկսեցին ախորժակով ուտել։

Կեանքը ամեն տեղ շարժվում էր. թռչունները խօսում էին, կրկին գարուն էր։ Գիշերվայ անձրեից յետոյ օդը մաքրվել, չինչ հայելիի նման էր գառել։ Ա. և Բ. գաւառները հանդերձ սահմաններով պարզ երևում էին։ Մատո-ամին հացից վերջը յենվեց մի քարի վերայ, յետ նայեց իր հայրենի ընդարձակդաշտավայրին. շատ քաղցը յիշատակներ զարթեցին նրա յիշողութեան մէջ... որոնց աշորդեցին վերջին քստմելի անցքերը... նա տեսաւ այնտեղ՝ որ միայն մի քանի գիւղերից էր ծուխ բարձրանում, իսկ մնացածներում ամեն ինչ հանգել էր մարդկանց կեանքի հետ. սոսկալով երեսը դարձրեց... ուղեց արտասվել, վշտից ճնշված ու քարացած սիրտը թեթևացնել, բայց չկարողացաւ, և մի ծանը հոգւոց հանելով վշտահար սրտից՝ նայեց այն նոր երկրին, որին դիմաւորում էր մեծ յուսով։ Այնտեղ ամեն ինչ վարդագոյն պատկերով երեացին նրա աշքերին—սար ու դաշտ ծաղկած՝ ժպտում էին... մարդիկ աղատ ման էին գալիս նրանց վերայ դարդ ու հոգսը մոռացած... ամեն տեղ սիրոյ համերաշխութիւնն էր թագաւորում... չկար ոչ մի

բոնութիւն...: Նա հրապուրված՝ դեռ նայում էր
այն նոր աշխարհին, երբ հեռուից նրա ականջին
հասաւ հովտի սրնգի նուազը: Այն մելամաղձոտ
եղանակը նրան շատ լաւ ժամոթ էր, որի մըդ-
մըդանքից դուրս էին թափում հայրենազուրկ
պանդուխտի դառն մըմունջներ, և նրա տանջ-
ված սիրտը նորից ալեկոծվեց տխուր մտքերով,
բայց դարձեալ չկարողացաւ արտասվել.

—Մկամ էս երկրին լէ դարդ ու ցաւեր կան
—մըմնջաց Մատօ-ամին ինքն իրեն և գլուխը
քաշ զցեց խորը հառաշելով:

Սրնգի ձայնը լռել էր, բայց Մատօ-ամին
դեռ գլուխը ձախ զցած՝ ծով ցաւերի մէջ երե-
րում էր, մինչև որ թռչունների ճլվլոցը սթափ-
փեցուց նրան. Նա գլուխը վեր բարձրացնելով
տեսաւ մօտիկ քարափի խորոշում մի թռչուն,
որը՝ ուրախ ճիճոցներավ՝ գուրզուրացնում էր
իր ձագուններին ու կերակուր տալիս... Այդ տե-
սարանը Մատօ-ամինի սիրտը ճմլեց, տակն վե-
րայ արաւ... և արտասուրի կաթիլները լուռ ու
խաղաղ կերպով հոսեցին նրա աշքերից... նոր
երկիրը արիւն արտսունքների ծով դարձաւ:

—Ախ, քաւֆուր մարդիկ—բացականչեցնա,
վեր ելաւ տեղից և վերջին անգամ մի կարօտա-

լի հայեացք զցելով հայրենիքի ծանօթ վայրե-
րին ու առաջ զնացին:

Մի քանի ըոսէից վերջը հայրենիքը անյայ-
տացաւ գաղթականների աշքերից, միայն նոր
երկիրը մնաց իր անծանօթ սար ու դաշտերով:

Բ

—Ահա, այս է ձեր որդու, Յովհաննէսի գե-
րեզմանը...

Ծերունի ժամակոչը դեռ չէր վերջացրել խօսքը,
նորեկ գաղթականները վրա թափվեցան ցոյց
տված հողէ կոյտի վերայ և սկսեցին լաց ու
կոծ անել: Տեսարանը սոսկալի էր, որդեկորոյս
մայրը; ուրիշ ոչ մի կերպ չ'կարողանալով սրտի
մռմուռը մեղմացնել, սկսեց գլխի մազերը պոր-
ճեկել և բռով հողը լցնել գլխին... Իսկ Մատօ-
ամին լուռ արձանացած՝ այդ ուժեղ հարվածի
դէմ՝ միայն արտառնք էր թափում... վերջը միայն
արտասվալի աշքերը երկնքին ուղղած՝ բողոքեց.

—Ես լէ չզինամ, որմւ դէմ գանգատիմ, քո,
թէ մարդկանց, ով Աստված...

Մատօ-ամին իր ընտանիքի հետ երկար դէմ
ու դէն թափառելուց վերջը Կովկասի գաւառա-
կան քաղաքներից մէկում գտաւ իր պանդուխտ

որդու միայն գերեզմանը: Նա արտսունքներով
իր սրտի անհուն վիշտը մի քիչ մեղմացնելուց
յետոյ՝ դառնալով ծերունի ժամակոչին՝ ասաց:
—Ժամկոչ ախպէր, տէր-տէր մի կանչէ, Յով-
հաննէսիս գերեզման օրհնել տանք:

—Փարա ունէս—հարցըեց նրան ժամկոչը:

—Մենք գաղթական ինք, թաղա ինք էկի,
փարա մզիկ ուստէ...

—Առանց փարի մեր տէրտէրները գերեզ-
ման օրհնել չեն, բիծա:

Մատո-ամին խորը սրտից «ախ» քաշելով
գլուխը քաշ զցեց և նորից արտսունքները թափ-
վեցան նրա աշերից: Այդ առաջին դառը կաթիլը
չէր, որ խմում էր Մատո-ամին իր երևակայած
«երշանիկ աշխարհի» մարդկանց ձեռքից, նա ար-
դին շատ կծու խօսքեր ու զրկանքներ էր կրել
նրանցից, զգացել էր օտարութեան դառն վի-
ճակը և անիծել:

—Թէ որ շատ ես ցանկանում որդուդ դե-
րեզմանը օրհնել տալ, կրկին խօսեց ժամակոչը,
—Հինգ օրից յետոյ Յովհաննէսիդ աղայի կնոջ
մահվան տարեղարձն է, անպատճառ կը դան գե-
րեզման օրհնել տալու, տուն էլ արի, խնդրէ ա-
ղային, որ որդուդ գերեզմանն էլ օրհնել տայ:

Մատո-ամին առանց գլուխը վեր բարձ-
րացնելու, առանց մի խօսք արտասանելու շա-
բունակում էր արտասփել, իսկ ժամակոչը ուշ
չ'դարձնելով այդ անտարբերութեան վերայ՝ աւե-
լացրեց.

—Հանգուցեալը շատ բարի կին էր, ափսոս,
հազար ափսոս նրան, նրա պէս խղճմտանքով,
աղքատասէր կին չ'կար մեր քաղաքում... ամեն
անդամ իրանց տունը գնալիս մի ըուբլի էր տա-
լիս ինձ, իսկ աղէն... Օ՛, շատ անխիզմ մարդ
է... մի կրպէկ դուրս չի դաւ ձեռքից աղքատի
համար, գեռ միւս պակասութիւններն էլ թող
ծածկված մնայ... Խեղճ կինը «վարամ-կապեց»,
դարդամահ եղաւ նրա ձեռքից... այդ խօսմ բո-
լորն էլ գիտեն:

Ծերունի ժամակոչը, նկատելով որ իր խօս-
քերին ուշ դարձնող չ'կայ, մոմռալով հեռացաւ:
Իսկ գաղթականները գեռ ողողում էին պանդուխ-
տի գերեզմանը իրանց արտսունքներով:

Գ

Չմեռ էր: Մատո-ամինի ընտանիքը պատրս-
պարվել էր մի խարխուկ խրճիթի մէջ, որը տե-
ղական գաղթականներին նպաստող «Մանաժո-

դովի» անդամներն էին վարձել: Խըճիթի գուռը անմիշապէս բացվում էր փողոցի վերայ, որի սեմերը իրանց տեղում լաւ հազցրած շինելու պատճառով բացվածքները լցված էին վալասներով, որոնց միջից քամին ուժեղ փշելիս ներս էր սողում խըճիթի մէջ և զարկում հիւանդ՝ Մատօամինի երեսին: Խըճիթը խոնաւ էր և պատրաստ ամենաուժեղ կազմվածքներն անդամ քայլայելու. որտեղ մի հնոց կար միայն, որի շուրջը բոլորած՝ թշվառ ընտանիքի անդամները՝ մոլոր ու շվար նայում էին տառապող հիւանդին, ընտանիքի միակ նեցուկին:

Դեռ ոչ ոքից մի օգնութիւն չէր եղել այդ դժբաղդ ընտանիքին. հասարակութիւնը, խնամատարութեան ամբողջ գործը յանձնելով մի խումբ մարդկանց, ինքը միանդամայն ձեռք էր քաշել նպաստելու գործից: Սակայն մի ներքին դադտնիք կար, որ Մասնաժողովի անդամներն էլ զրկում էին նպաստից յիշեալ թշվառ ընտանիքին, մի գաղտնիք, որ վերջիվերջոյ ամբողջ ընտանիքի կորստեան պատճառ դարձաւ:

Խըճիթում խորին, սրտամաշ լուռթիւն էր տիրում, երեմն միայն հիւանդն էր խանդարում այդ լուռթիւնը իր զառանցանքներով.

—Զարկին, սպանին, Տօնօյս, խաւար, խաւարի հասէք...

Տօնօն հիւանդի մեծ որդին էր, որը զոհվեց «կոտորածի» ժամանակ և որի մասին շարունակ զառանցում էր նա: Իսկ հարս ու սկէսուր լսելով այդ իրանց համար պաշտելի անունը, սկսում էին խուլ կերպով հեկեկալ և արտսունք թափել:

Դ

—Ապա չուր երբ յմալ խեղճ ու անճար մանք, մարէ, ասաց հարսը սկէսուրոջը, երբ վերջինս դատարկ ձեռքով տուն վերադարձաւ, —ազգ յմէնուն խաց կիտայ, շոր կիտայ, կերակուր կիտայ, մզի, յորի կը դրէ...»

—Ես իմալ էնիմ, լաւօ, գացի անդամներուն, խըկեցին մենձ անդամի կուշտ, զէնլէ ըսաց. «Ես խըկեցին մենձ անդամի կուշտ, զէնլէ ըսաց. «Ես կիքամ, կը տեսնամ...» Ուրան գալլուց ինչ խէր... ին օր լէ էկաւ... Ախ, Աստված, յորի մեր խոքին լէ չես առնի պլթնենք... յորի մզի լէ քըրդերը չեր չը մորթեցին Տօնօյիս խետ...

Նա այլ ևս չկարողացաւ շարունակել...

—Թըղ ուրանց գլուխ ուտէ ուրանց շոր, թըղ փշուր մը խաց ու կերակուր տան խիւան-դըղ փշուր մը խաց ու կերակուր տան խիւան-դին ու Մինասիս, մզի բան լէ պէտք չէ... Ախ,

վախնամ Մինասս լէ խիւնդնայ—ասաց հարսն ու,
իր սիրելի զաւակին կըծքին սեղմելով սկսեց նոյն-
պէս լաց լինել:

Օրը մժնում էր, բայց Մատո-ամինի ընտա-
նիք դեռ այդ օրը մի քան չէր կերել, այդ էր
պատճառը որ նրա կինը դիմեց Մասնաժողովի
անդամներին օգնութիւն խնդրելու, թէև այդ
քանը նրա համար շատ ծանր էր, մի ինչ որ
պատճառով։ Սակայն այդ դիմումն էլ չ'օգնեց
թշվառ ընտանիքին, ուստի քաղցածութեան ու
դառն վշտի տակ ճնշված՝ հեծեծում էին, երբ
մի պառաւ կին, մի քանի հաց ու մի մեծ աման
թանէ սպաս ձեռին, ներս մտաւ խրճիթի դըր-
նից. կարծես երկնքից մի լոյս ծագեց նրանց
վերայ...

Այդ երեկոյ բոլորն էլ կուշտ կերակրվեցին,
մինչև անզամ հիւանդն էլ մի քանի գդալ խմեց
այդ, իրանց սիրելի հայրենիքի, կերակուրից, որ և
նորից նրա յիշողութեան մէջ զարթեցին քաղցը
ու դառն յիշատակներ, երբ նա սկսեց կրկին զա-
ռանցանքների մէջ ընկնել...։ Իսկ ընտանիքի
միւս անդամները, քաղցից ազատվելով՝ խորա-
սուզվեցին լուռ ու խորհրդաւոր մտատանջութեան
մէջ—որպիսին կըծոտում է մարդուս սրտի լա-

ըերը և, տանջանքից առաջացած արտսունքները՝
փոխանակ դուրս թափելու՝ ներս է կաթեցնում...

Ե

Գասպար Մոլիգեանը, որ տեղական Մաս-
նաժողովի նախագահն էր, անդամներին ժողովի
էր հրաւիրել իր տուն։ Դեռ ոչ ոք չէր եկել ան-
դամներից բացի Տէր Մարգարից, որը օրվայ մեծ
մասը անց էր կացնում Մոլիգեանի տնում։

—Իրաւ, տէրտէր, ինչ սիրունն է եղել ան-
պիտան հարսը, սուտ չէ որ լաւ ճաշակ ունես...
Բաս քահանայութեան գործում ինչո՞ւ անշնորհք
ես—խօսեց Մոլիգեան ուրախ տրամադրութեան
տակ և Տէր Մարգարի ուսին խփելով։

—Հը՛, մնց է, խօմ այժմ հաւատում ես, որ
լաւ ճաշակ ունեմ—ասաց Տէր Մարգար մի ա-
ռանձին պարծանքով,—որ լաւ հագցնես, մի քիչ
էլ վիճակը բարեկարգես, էլ նմանը չի ճարվի...։

—Եթէ ծխերիդ բարեկարգութեան մասին էլ
մի քիչ մտածես, հոգաս, այն ժամանակ նրանք
քեզանից շատ զոհ կը լինին և աւելորդ անուն-
քեզանից շատ զոհ կը լինին քեզ—Տէրտէր,—վրարերից Մո-
լիգեանը աւելի խիստ ծիծաղելով, և ապա, ձայնի
տոննը փոխելով, աւելացրեց.

—Այսօրվայ ժողովում քեզ ու չաճիխն կը յանձնենք գաղթականներին բան բաժանելու գործը, այլ ևս միւս անդամները իրաւունք չեն ունենալ գործի մէջ մտնելու... ուրեմն գործդ լաւ կը տանես... Մեր աւագին կասեմ, որ քիչ օգնէ... նա քեզանից ժիր է այդ բանում...

—Դրա համար էլ նրան «Սատանի-շարուխ» են ասում, վրաբերեց Տէր Մարգարը: Փառք Աստուծոյ, նա էլ ինձանից պակաս չէ մականունների կողմից...

—Եւ դուն էլ միսիթարվում ես, տէրտէր, բայց չէ որ նա մի հասարակ «դուխանչի» է, իսկ դու...

—Ես ինչ եմ արել, Գասպար, ինչով եմ մեղաւոր, որ դու էլ ես ինձ պարսաւում,—ասաց Տէր Մարգարը բարկացած և տեղից վեր թռաւ որ գնայ. բայց Մոլիգեանը թոյլ շտվեց և սկսեց նրա թոյլ կողմերը շոյել, այնպէս՝ որ տէր Մարգարը իսպառ մոռանալով իր վիրաւորանքը կրկին նստեց իր աթոռի վերայ:

—Այդքան էլ ձեական անձնասէր մի լինի, տէրտէր, կարծես իրար չենք ճանաշում... ձիշտն ասած, ես չեմ ուզում, որ դու միշտ այժմեան դերիդ մէջ մնաս...

Մոլիգեանը խօսքը չվերչացրած՝ ներս մտաւ

անդամներից մէկը- Հաճի Սննօն: *) Սա ծնվել էր գաւառական քաղաքներից մէկում, որտեղ գրել-կարգալ սովորելուց վերջը՝ մտել էր մի վաճառականի մօտ աշակերտ: Այստեղ զարգանալով նրա մէջ շահասիրական տենչանքը՝ հանգիստ չէր թողնում, մինչև որ զցեց օտար երկիր բաղդ որոնելու: Երկար դէս ու դէն թափառելուց վերջը՝ բուն դրեց Կ. նահանգում մի խուլ գիւղի մէջ և սկսեց ամեն տեսակ միջոցներ ձեռք առնելով իր «բեռը բռնել»: Եւ այդ բեռը բռնելուց յետոյ կարիք զգաց երուսաղէմ գնալու, որպէս զի այնտեղից ձեռք բերէր ժողովրդի աշքը կուրացնող նշանը, իր մանածները աւելի լաւ ներկելու համար: Գնացել և վերադառնել էր արդէն, բայց ոչ իր ծննդավայրը, որտեղ իր ներկը չէր բանի, այլ մի աւելի հեռու տեղ, ուր շատ լաւ էր բռնում մի աւելի հեռու տեղ, ուր շատ լաւ էր դարիր ներկը և ուր հասարակական գործիչ էր դարձել մինչև անդամ:

—Ես ներս մտնելիս մի բանի մասի խօսում էիր, Գասպար աղա, ինչու ընդհատեցիր,—խօսեց Հաճի Սննօն նստելուց վերջը:

*) Այնքն էլ նրան այդպէս էին կոչում, թէև նա միշտ ստորագրում էր՝ Սմբատ Առիւծեան:

—Քո և Գիւլեանի մասին էինք խօսում, կեղծեց Մոլիգեանը:

—Պէտք է բռնել նրա բերանը, —վրաբերեց Հաճի-Ծնձօն, հակառակ դէպքում ես ուրիշ կերպ կը փարփեմ նրա հետ... շատ է շափում, ձեռում... ես զարմանում եմ թէ ինչո՞ւ նրան չէք հեռացնում անդամութիւնից:

—Կամաց-կամաց, թակարդը լարված է, պատասխանեց տէր Մարգարը խորհրդաւոր կերպով:

—Ե՞ս որ անցեալ ժողովից բացակայ էր տէրը, շարունակեց Մոլիգեանը իր կիսատ մասցած խօսքերը, Գիւլեանը ձայնը երկինք էր բարձրացնում, թէ Հաճին ինչ իրաւունք ունի, առանց միւս անդամների գիտութեան, զաղթականներին շոր բաժանելու. ահա այդ մասին էինք խօսում:

—Այդ պարոնը ասում է, թէ «թուրքերն ու քրդերը այնտեղ էին հարստահարում, դուք էլ այստեղ». Էլ չի մտածում, որ այնտեղ թալանելուց, բռնաբարելուց յետոյ՝ մորթում էին կամ «սաղ-սաղ» թաղում փոսերի մէջ, իսկ մենք...

Մնացած երկու անդամը և մի փոխանդամը ներս մտնելով Ընդհատեցին Հաճի-Ծնձօյի խօսքը, երբ Մոլիգեանը տեղից վեր թռնելով սիրալիք կերպով ընդունեց նրանց, որոնց ներկայութեամբ

այլ և չ' շարունակվեց ընդհատված խօսակցութիւնը:

—Պէտք է շուտ սկսել և վերջացնել ժողովը, պ. նախագահ, որովհետև գործ ունենք, չենք կարող երկար մնալ, ասաց նորելիներից մէկը նըստելուն պէս: Սա մի վաճառական էր—նոյնպէս բաղդի յետեկից վազողներից, որ տամնեակ մանեթներով գործ էր սկսել և մի քանի տարուց վերջը տասնեակ հազարների հասցըել: Այժմ նա բարձրացած իր դիզած փողի կոյտի վերայ, խիստ բրհամարհանքովէրնայումփողազուրկմարդկանց:

—Պէտք է Գիւլեանին սպասենք, Մանուկ աղա, պատասխանեց Մոլիգեանը շտապողին, որովհետև այսօրվայ ժողովի պատճառը նա է եղել:

—Լաւ, բայց նրա սանձը պէտք է քաշել, Գասպար աղա, խօսեց կրկին Մանուկ աղան, նա ուզում է բոլորիս իր կարծիքներին ծառայեցնել. «Գաղթականների հետ պէտք է մեղմ ու սիրով վարվել, ամենքին հաւասար աշքով նայել». և այսպէս մի շարք «զաւզակութիւններ»...

—Ուզդակի պէտք է անդամութիւնից հեռացնել, ուրիշ ոչինչ, թէ չէ դեռ շատ խաղեր կը խաղայ մեր գլխին, վրաբերեց տէր Մարգարը:

—Մենք կը խնդրենք պ. նախագահին, որ
նա լուծված համարէ Մասնաժողովը և առաջարկէ
հասարակութեան նոր ընտրութիւն կատարել,
այն ժամանակ շատ հեշտ կը լինի նրան սեաց-
նելը, ասաց նորեկներից երկրորդ անդամը-Ար-
շակ Զոկեան, որը աւարտելով մեր միջնակարգ
դպրոցներից մէկում և գուրկ լինելով հիմնական-
«Մից»՝ շատ աննախանձելի դիրքի մէջ էր—միշտ
թերվում էր այն կողմը, որտեղ լինում էր ուժը,
ուստի լիովին անձնատուր էր եղել Մոլիգեանի
կամքին և միշտ արձագանք էր տալիս նրա խօս-
քերին:

—Այո՛, արդէն այդպէս էլ ծրագրված է, ա-
պահովացրեց ժողովականներին Մոլիգեան, հաս-
կացնելով որ այդ իր կազմած ծրագիրն է:

—Իսկապէս, եթէ այս կերպ շարունակվե-
լու լինի, ես կը հրաժարվեմ գործից, ասաց
Մանուկ աղան, այս ինչ է, ամեն օր կոիւ, դալ-
մաղալ... մէկին շոր է տրվել, միւսին չի տրվել,
մէկին շատ է տրվել, միւսին քիչ... ինչ անենք,
եղբայր, իսկի հնար կայ... հնարկէ, մէկին շատ
կը լինի, մէկին քիչ... խօմ ամբողջ օրերով դրանց
յետևից քաշ գալու շենք դրա համար:

—Այդ բոլորն էլ «ափեղցիկ» խօսքեր են,

Մանուկ աղա, շարժէ այդքան նշանակութիւն
տալ, ասաց Մոլիգեանը արհամարանքով:

Դեռ այդ հարցի մասին խօսակցութիւնը շա-
րունակվում էր, երբ Գիւլեանը ներս մտաւ, հա-
մեստութեամբ զլուխ տվեց ամենքին և նստեց
անկիւնում տրված աթոռի վերայ ժողովական-
ներից հեռու:

Արամ Գիւլեանը տեղական երկդասեան դպրո-
ցում սովորելուց վերջը, շարունակելու հչ մի հնա-
րաւորութիւն չունենալով, կամայ ակամայ հաշտ-
վեց իր սև բաղդի հետ և նուիրվեց ընթերցա-
նութեան։ Այդ միջոցով նա բարձրացել էր սո-
րուխի սովորական մակերեսոյթից վեր և մի փոր-
քիկ շըջան կազմելով՝ անդադար կոիւ էր մղում
հասարակական չարիքների դէմ, ինչպէս և այս
անգամ, ընտրվելով Մասնաժողովի անդամ, սկսեց
կուել անարդարութիւնների դէմ։ Եւ նա, ամեն տե-
սակ թէ նիւթական և թէ բարոյական զրկանքներ
կրելով հանդերձ, երբէք չը շեղվեց իր ընթերցքից,
երբէք չ'զաւաճանեց իր համոզմունքներին մինչև
իր կեանքի վերջը, որ շատ շուտ վրահասաւ։

Ժողովը արդէն սկսվել էր. երբ խօսք բաց-
վեց զաղթականներին նպաստ տալու մասին, Գիւ-
լեանը իրաւունք խնդրելով նախագահից, ասաց.

—Պարոններ, պէտք է խոստովաննել, որ գաղթականներին տրվելիք օգնութիւնը լաւ չէ կատարվում, օրինակի համար, կան ընտանիքներ, որ ամեն բան նոյն իսկ պահանջից էլ աւելի են ստացել, կան էլ—որ ոշինչ չեն ստացել։ Զը մոռանանք որ այժմ հարիւրաւոր թշվառացածների բաղդ մեր ձեռքումն է, մենք պարտականք նրանց մասին լուրջ մտածելու և հոգալու։ Մենք պարտականք նրանց բոլորի տները մտնելու, նրանց վիճակի հետ անձամբ ծանօթանալու... միայն այդ դէպքում կարող ենք ամեն մէկին իր կարիքի համեմատ օգնել և բարեխղճութեամբ գործ կատարել։

—Պ. Գիւեան, որ պէտք է բարեխղճութեամբ գործ կատարել, դըա դէմ ոչ ոք չի կարող խօսել, խօսեց նախագահ, բայց դուք ձեր մուլթ կասկածներով մեղանչում էք ձեր ընկերների դէմ, բանից դուրս է գալիս, որ չպէտք է հաւատ ընծայենք մեր ընկերներից մէկին կամ երկուսին—և ամեն մի բան բոլորս միասին. պէտք է կատարենք... Զեր այդ կասկածելի վերաբերմունքը երբէք պատիւ չէ բերում մեզ—Մասնաժողովի անդամներիս, եթէ մենք միմեանց վերայ վստահութիւն չունենք, աւելի լաւ է հեռանանք գործից...

—Այո՛, այո՛, անշուշտ պէտք է հեռանալ, եթէ միմեանց վերայ վստահութիւն և հաւատ չունենք, վրաբերեց Զոկեանը։

—Բայց աւելի լաւ չէ, որ միայն Պ. Գիւեանը հեռանայ գործից, քանի որ միայն նա վստահութիւն չունի իր ընկերների վերայ և միշտ վէճների ու աղմուկների պատճառ է դառնում, աւելացըց Հաճի-Մնծօն։

—Իսկ ես կը խնդրէի պա. Ժողովականներին, որ նախ քան հեռանալը, Պ. Գիւեանը կամ յետ առնի իր անվայել խօսքերը և կամ ներողութիւն խնդրէ ժողովականներից, որպէս զի միւս անդամ իրաւունք չ'համարէ՝ առանց ակընյայտնի փաստերի՝ մուլթ կասկածանքներով խօսելու, ասաց Մանուկ աղան խիստ տաքացած կերպով։

—Իրաւ է ասում, Մանուկ աղան, վրաբերեց տէր Մարգարը, եթէ օրինականութիւնը խիստ շպահանենք...

—Եհ, պարոններ, շարժէ այսքան խօսել այդ չնշին հարցի մասին, այդպիսով մենք աւելի ուժ կտանք աննպաստ լուրեր տարածվելուն, վրաբերեց նախագահը, խոհեմութիւն համարելով այդ մասին կարճ կտրելը։

—Այո՛, պ. նախագահ, ես պատիւ եմ պահանջում Պ. Գիւլեանից, իր զրպարտութիւնների համար, բացականչեց Հաճի-Մնծօն, խրախուսված՝ Տէր Մարգարի խօսքերից:

—Ես կարիք չեմ զգում փաստերով ապացուցանելու եղելութիւնը, ասաց Գիւլեանը խորհրդաւոր տոնով, քանի որ մի բարեգործական Մասնաժողովի անդամների հետ գործ ունեմ և ոչ թէ ոստիկանութեան... բայց խնդրում եմ ինձ բացատրէք, չ՞ որ մեր ժողովներից մէկում վճռովեց, որ, առանց բոլոր անդամների, ոչ ոքի բան շտալ, սակայն...

—Սխալվել Հաճին շոր էր տվել մէկին, հիմայ ինչ եղաւ, եղբայր, աշխարհք քանդվեց, որ ահազին աղմուկ ես ուզում բարձրացնել: Տէր Մարգարը իր այս խօսքերով նորից զրգոեց ժողովականներից մի երկուսին: Ժողովը աւելի աղմրկալի դարձաւ. բայց նախագահը հարկ համարեց փակել այդ անախորժ հարցը, համոզված լինելով որ եթէ սուր կերպարանք ստանալու լինի, Գիւլեանը ամեն ջանք գործ կը գնէ եղելութիւնը պարզելու համար, որ երբէք ձեռնտու չէր:

—Բաւական է այդ հարցի մասին խօսելը, պարոններ, ասաց նա վճռական ձայնով, հակա-

ռակ դէպրում ստիպված կը լինեմ փակել ժողովը և հեռանալ:

—Պարոն նախագահ, առաջ լռեցրէք այդ պարոնին, ասաց փոխ անդամը՝ (ցոյց տալով Գիւլեանին) որ մինչև այդ ժամանակ լուռ նստած՝ իր խանութի ապարիկների վերայ էր մտածում: Սա մի այնպիսի պարզ մարդ էր, իր ազգանունն անգամ բաւական էր իր կենսագրութիւնը գրելու համար-Մազլիկեան:

—Լաւ-լաւ, բաւական է, ընդհատեց տէր Մարգարին նախագահը, որ ուզում էր նորից խօսել: Թողէք այդ հարցը, ի սէր Աստծու, աւելի կարևոր հարց կայ շոշափելու: Պէտք է երկու հոգու ընտրել մեր միջից, որպէս զի միայն նրանք կատարեն բաժանման գործը. այդպիսով ամեն մարդ իրաւունք չի համարիլ՝ տեղի անտեղի՝ քիթ մտցնել գործի մէջ և անախորժութիւնների առիթ տալ: Ես իմ կողմից առաջարկում եմ այդ գործի համար տէր հօըլ և Հաճին...

—Համաձայն ենք-ձայն տվեցին բոլոր անդամները բացի Գիւլեանից:

—Այդպիսով ստիպված չենք լինի այլ ևս ամեն օր մի չնշին բանի համար հաւաքվել և զուր ժամանակ մեռցնել, աւելացրեց նախագահը:

— Ըստ ճշմարիտ է ասում, պ. նախագահը, վրաբերեց Մանուկ աղան: Մի ըոպէ հանգիստ չեն թողնում... հա արի շոր պէտք է բաժանենք, հա արի, փայտ պէտք է բաժանենք, հա արի, ալիւր պէտք է բաժանենք...

Մանուկ աղան դեռ շարունակում էր, երբ նախագահը ընդհատեց նրա խօսքը ասելով:

— Ինչեցէ, պարոններ, այդ հարցը վճռված է, անցնենք մի այլ հարցի: Ինչպէս լսվում է, գաղթականների մէջ մի վատահամբաւ ընտանիք կայ...

— Եր խօսքը այն աղբիւրի մօտ բնակող փշի մասին է, պ. նախագահ, հարցըց չաճի- Մնձօն քմծիծաղ տալով:

— Եյ՛, այ՛, հէնց նրա. նա մի ըոպէ լռեց, բայց երբ նկատեց, որ իր հարցը մի քանիսին անյարմար բան թւաց, աւելացրեց—չէ, պարոններ, պէտք է աշքի առաջ ունենալ այդ տեսակ- ներին և, պատժելու համար, նպաստ չտալ. հա- կառակ դէպքում մեր արած բարեգործութիւնը չի կարող ծառայել իր նպատակին: Վերջապէս, մեզանից ով ուզում է լինի, այն տունը մտնե- լուն պէս կասկածանքի կենթարկվի և կը բաժ- բասվի:

— Ի հարկէ պ. նախագահը մի բան գիտէ, որ խորհուրդ է տալիս հեռու մնալ այդ ընտա- նիքից, ասաց Զոկեանը:

— Ճշմարիտն ասած, ես մի բան չեմ լսել այդ ընտանիքի մասին, ասաց Մանուկ աղան շվարած կերպով, բայց որ պ. նախագահը ասում է, պէտք է հաւատալ նրան և հեռու մնալ...

— Եյ՛, այ՛, պէտք է խիստ պատժել այդ- պիսիներին, պ. նախագահ, խօսեց Սաղիկեանը առանց խնդրի բուն էութիւնը հասկանալու:

Իսկ չաճի-Մնձօն լուր նայում էր տէր Մար- գարին ու խորհրդաւոր կերպով ժպտում. բայց երբ Գիւեան էր խօսում՝ նա հանում էր լեզուն և ծամածութիւններ անում, թագցնելով այդ՝ Մոլիգեանից և Մանուկ աղայից.

— Պարոններ, մի ըոպէ ընդունենք, որ այդ ընտանիքի մասին յայտնված կարծիքը ճշմարիտ է, խօսեց Գիւեանը, որա համար պէտք է քաղ- ցած թողնել... չէ որ այդ վարմունքով աւելի առիթ կտանք... չէ որ շարիքների մեծ մասը առաջ է գալիս կարիքից—անճար յուսահատու- թիւնից:

Գիւեանի այս նկատողութիւնը երկար վի- ճարանութիւնների առիթ դարձաւ, բայց վերջը

լուծվեց դարձեալ Գիւեանի կարծիքին հակառակ, երբ վերջինս խիստ յուզված ձայնով բացականչեց.

Օ՛, պարոններ, ձեր ամեն մի շարժման մէջ մի գաղտնիք կայ թագնված... ձեր ամեն մի խօսքի մէջ մի կաթիլ թոյն կայ... բայց ես չեմ թողնիլ, որ ձեր այդ մութնպատակները թագնված մնայ, մի օր անշուշտ լոյս կը հանեմ, որպէս զի ձեզ շրջապատող կոյը հասարակութիւնը ճանաչէ, թէ դուք ովքեր էք:

Գիւեանը վեր առաւ գլխարկը և խկոյն հեռացաւ ժողովից: Հաճի-Մնծոն և Սաղիկեանը շվացըին նրա յետեից, այնպէս՝ որ նա լսեց...

Զ

Գիւեանը հասնելով տուն՝ այն միայնութեան մէջ սկսեց թափել իր սրտում կուտակված դառնութիւնը ինքն իրեն հետ խօսելով.

Թող անիծվի այն բարեգործութիւնը, որը կատարվում է ստոր, ցածահոգի մարդկանց ձեռքով և որը կապված է նրանց հաճոյքների հետ... թող անիծվի այն հասարակութիւնը, որը մնունդ է տալիս այդ տեսակ ճիզվիթներին... չէ որ վատ հողն է ընտիր ցորենի հատիկները հաճարի փո-

խում և անուշ կորիզից բուսած ծառի պտուղները դառնացնում...

Նա մի քանի ըոպէ լուռ մնալուց յետոյ՝ մի խոր հոգոց հանելով բողոքեց.

— Ել ինչո՞ւ համար են այն բոլոր ջանքերը... ինչո՞ւ համար անարգվեցան, չարչարվեցան, զոհվեցան մարդկային այն ընտրեալ մարգարիտները... և զեռ տնքում են միենոյն խաչի ծանրութեան տակ, երբ ոչ մի ակնյայտնի բարեփոխութիւն չեղաւ մարդկանց վիճակի մէջ... վոխվեց միայն ձեւ հայեացքների հետ... և դարձեալ տանշվածների ու հալածվածների աչքերից արտսունքը շըցամաքեց, դարձեալ երկիրը արիւն արտսունքների ծով մնաց.

Եւ բողոքողը, դադարելով սենեակի մէջ գնալդալուց, նստեց սեղանի մօտ, զլուխը սեղմեց ձեռքերի մէջ և սկսեց արտասվել: Երկար միջոց յուսահատ մտածմունքների մէջ տառապում էր, մինչև որ իր յոդնած զլուխը հովին տալու ցանկութիւն զգաց և անմիջապէս դուրս գնաց:

Դուրսը ցուրտ էր. սառը քամին սթափեցուց Գիւեանին, երբ նա զգաց, որ վերարկուչէր հագել. ուստի շտապով տուն վերադարձաւ, հազնվեց ու կըկին դուրս գնաց: Աստղալի եր-

կինքը ժպտում էր, բայց Գիւլեանը չէր զգում այդ. նրան թւում էր, թէ երկիրը՝ ձիւնի հաստ շերտի տակ ճնշված՝ տքում-հառաշում էր: Նա երկար, շատ երկար թափառեց հեռացած մարդկանց բնակարաններից, մինչև որ հորիզոնից դուրս եկաւ լուսինը, երբ նա նստելով մի ծառի կոճղի վերայ՝ աչքերը սեեռեց այն աւանդեալ «սիրագուրկ կոյսին», որը Գիւլեանին յիշեցրեց իր վազուց կորցրած սէրը, որ մի ժամանակ կեանքի փոթորիկների դէմ կուելու ուժ էրներշնչում, ապերելու վառ յոյսեր էր տալիս նրան: Իսկ այժմ... այժմ նա ամեն մի նուազ քամու դէմ տատանվում է...: Եւ ամբողջ հինգ տարվայ տածած յոյսերը, քաշած տառապանքները մի առ մի կենդանացան նրա յիշողութեան մէջ:

Գիւլեանը սիրել էր անկեղծ, մաքուր իդէալական սիրով, սակայն իր պարզ ու իդէալիստ վարմունքների պատճառով չէր կարողացել իր սիրած էակի սիրաը շահել: Մի օր մի հարուստ բուրժուայ խնդրել էր նրա հարսնացուի ձեռքը և իսկոյն համաձայնութիւն էր կայացել ու ամեն բան վերջացել... Ահա, այն չարաբաղդ օրից, որը երկար միջոց Գիւլեանի համար տանջանքների ու արտասուրների աղբիւր էր դարձել, նա փոխել

էր համոզմունքը ամուսնական հարցի վերաբերութեամբ և երդվել էր երբէք չամուսնանալ:

—Այս, անխիղճ օրիորդ, բացականչեց Գիւլեանը մի շարք հրապուրիչ յիշողութիւններից վերջը, միմիայն դու կարող էր ինձ փրկել այսպիսի դառն յուսահատութիւններից, նոր-նոր յոյսեր ներշնչել, գործի ասպարէզ մղել... սակայն դու, չհասկանալով ինձ, անկեղծ սէրս մերժեցիր... և ձեռքդ մեխնեցիր մի այլ մարդու միմիայն այն զանազանութեան համար, որ նա քեզ խոստացաւ տալ՝ իմ մաքուր սիրոյ փոխարէն՝ ճոխութիւն և կեանքի անմիտ վայելքները: Օ՛, երբէք, երբէք ես չեմ ներել քեզ, որովհետև դու քո վարմունքով իմ բոլոր յոյսերը հիմն ի վերխորակեցիր, այնպէս որ ապրելու սնունդ անդամ չմաց ինձ համար կեանքում:

Բողոքովը իր տանջված ու յոզնած գլուխը նորից սեղմելով ձեռքերի մէջ խորասուզվեց մտածմունքների մէջ: Երբ նա սթափվեց, արշալուսը արդէն սկսել էր բացվել: Ահա այն հրաշալի տեսարանը Գիւլեանի սրտի մէջ նորից վառ յոյսեր, վառ երեակայութիւններ զարթեցուց... Նրան թւում էր թէ իր պաշտելի էակի հոգին սաւառնում է այն ծիրանազոյն շողերի մէջ... և նրա

աչքի առաջ պատկերացաւ նաև հեռու ապագայի,
իր վառ ցնորդների Արշալոյսը:

—Երբէք չպէտք է յուսահատվել, թէկուղ
կեանքի դառնութիւններ խեղդեն մեզ, այլ ան-
ընդհատ յուսալ, աշխատել, կռւել խաւարի դէմ...
այն միակ համոզմունքով՝ որ վերջիվերջոյ միայն
ճշմարտութեան ջահը պէտք է լուսաւորէ ամեն-
քին—բացականչեց նա ողերված և տուն վե-
րադարձաւ:

Է

Դիւեանը հեռացված էր Մասնաժողովի ան-
դամութիւնից, բայց՝ իբրև սոսկ մարդ՝ միշտ օդ-
նում էր կարօտ գաղթականներին: Վերոյիշեալ
ժողովից մի բանի օր յետոյ նա գնաց Մատո-
ամինի ընտանիքին հանդիպելու:

—Չեզ ուտելիք, կամ հաքնելիք դեռ չեն
տվել, հարցընց Գիւեանը ներս մտնելուն պէս:

—Քսկի բան լէ տված չեն, պատվելի, պա-
տասխանեց Մատո-ամինի կինը,—թըղ մըր խի-
ւանդին խոքան, թըղ մի տեղ ու ճար էնին, մը-
զիկ բան լէ պէտք չէ... էս օր խինդ օր է որ
նշխարհ չէ դրած ուր բերան... մէկ զգալ տաք
կերակուր չկայ...

—Այս մօտ օրերում ոչ ոք չի եկել ձեր տունը,
ձեր վիճակի մասին հարց ու փորձ անող չի եղել,
կըկին հարցընց Գիւլեանը:

—Յորի չէ, գիրան, ամայ ինչ ֆայտայ ու-
րանց գալուց, մըր խիւանդի դարդ ու ցաւ չեն
խարցու...

—Լաւ-լաւ, մայրիկ, ընդհատեց նրան Գիւ-
եանը, հասկանալով՝ թէ ինչ էր ուզում նա
ասել:

—Ախրի իմալ թորկեմ, պատվելի... զի՞նչ կու-
զեն մըզնէ... ախ, թըղ իմ երիկ խիւանդ չեղ-
նէր, մըզիկ բան լէ պէտք չէր, մենք կը բըռ-
նէինք ուրան ձեռք, մուրակութիւն կանէինք
ըշխո աղէկ էր... եաման, պատվելի, քո բազդին
եմ ընկել, քո ոտք կը պակնեմ, դու մըր նամուս
ապատիր...

Եւ նա արտասվելով ընկաւ այցելուի ոտքերը:
Վերջինս նրան վեր բարձրացնելով՝ ասաց զգաց-
ված ձայնով.

—Ես գիտեմ, մայրիկ ջան, ես բոլորը գի-
տեմ,—և ապա մօտենալով հիւանդին՝ ձեռքը դրեց
ճակատին: Հիւանդը նկատելով այցելուին՝ բա-
ցականչեց—«ՃՌԵՐ»: Հարսը կաւէ ամանով ջուրը
մօտեցուց ճգնաժամում տառապող հիւանդի շըր-

թունքներին, բայց հիւանդը չկարողացաւ խմել։ Գիւլեանը իսկոյն դուրս գնաց և հարեան տանից մի թէյի գղալ առնելով՝ նորից յետ դարձաւ և սկսեց նրանով հիւանդի պապակած բերանը ջուր լցնել, բայց այդ էլ անաջող անցաւ։ Այցելուն զգալով հիւանդի անյուսալի վիճակը և իր անգօրութիւնը, անխօս հեռացաւ դառնութեամբ լցված հոգով։

Ը

Եօթ ամիս էր անցել այն օրից, երբ Մատո-ամինի ընտանիքը բաղկացած էր ութ հոգուց, որոնցից այժմ միայն մէկ հոգի էր մացել։ Մատո-ամինի մահից վերջը մեռաւ նաև իր կինը—անյարմար կենցաղավարութիւնը, սիրելիների կուկիծը քամել, սպառել էին վերջինիս կենսունակութիւնը, ուստի իր ամուսնու մահից անմիշապէս յետոյ անկողին ընկաւ և երեք օրից վերջը մեռաւ։ Միւնոյն անկանոն կեանքը մօր զըկից խլեց փոքրիկ Մինասին ու հողին յահճնեց։ Իսկ Զանանը, Մատո-ամինի ընտանիքից մացած այդ միակ ժառանգը, շատ մեծ զոհութիւններ անձն առաւ իր սիրելի զաւակի կեանքը փրկելու համար, բայց այն բոլոր մի-

չացները ապարդիւն անցան։ Նա ամենից առաջ ծունկ չոքեց, արտսունք թափեց երկնքից օգնութիւն հայցելով... Այնտեղից օգնութիւն չեղաւ։ Ապա նա դիմեց ձեռնհաս մարդկանց... և այդ դիմումը վերջիվերջոյ նրան անվերականգնելի անկման հասուց... Սակայն նա այդ սոսկալի անկումը դեռ չէր զգում, որովհետև իր զաւակին մահից փրկելու յոյսը ամեն բան մոռացնել էր տվել նրան, նոյն իսկ ինքն իրեն, մինչև որ անողոք մահը խլեց նրանից և այն միակ միսիթարութիւնը, երբ նա զգաց... և միանգամայն խորտակվեց, ոչնչացաւ։ Կեանքը այնուհետև նրա համար մի թունաւոր օձ դառաւ, որ ոչ մի վայրկեան հանգիստ չէր թողնում, մինչև որ կարողացաւ իրեն զբաղեցնող միտքը իրագործել։ Մի օր նա մի թոկ կախելով խըճիթի առաստաղից՝ կախաղան բարձրացաւ։

Հետաքրքիր բազմութիւնը շրջապատել էր զոհի դիակը, երբ Գիւլեանը, օգտվելով հանգամանքից, մի քանի խօսք ասաց հանդիսականներին, և վերջը, դառնալով այնտեղ գտնւող մի խումբ գաղթականներին, աւելացրեց։

—Թո՞ղ այս զոհը ձեզ համար օրինակ ու իրատ լինի, ով հալածված ժողովուրդ. այդ զոհը

ութ հոգուց բաղկացած ընտանիքի վերջին շառաւիղն էր։ Այդ ընտանիքի երեք անդամը այնտեղ հայրենի երկրում զոհվեցան, իսկ մնացած հինգն էլ այստեղ... «Այստեղ էլ այստեղ էլ» ձեզ համար հանգիստ կայարան չկայ... Այստեղ ձեր թշնամին սուրբ ձեռին է գալիս... իսկ այստեղ օձի նման սողալով... Ուրեմն փախէք... պատրսպարվեցէք ձեր հայրենիքի աւերակների տակ, մինչև որ...


Նա խօսքը չկարողացաւ վերջացնել, և անսպասելի կերպով հեռացաւ բազմութեան միջից, նոյն օրը ևեթ դուրս փախաւ հասարակական շրջանից և, վրէժինդրութեան կրակով լցված, մի յայտնի աւագակ դարձաւ...

Գիւլեանի՝ այդ նոր կեանքի պատկերը լոյս կը հանենք մի այլ անդամ։

1903 թ. մարտի 19.

Կաղզվանում.

Վ Ե Ր Զ



ՀՀ Ազգային գրադարան



NL0343638

40.583

891.99
2-15